

զհոգի կարողեա եպիսկոպոսին, վերադիտողի Սրբոյն Գլխայ լուսաշէն վանից՝ քանզի կարի սիրով ընկալան զմեզ՝ ժողովելով զմերս օտարութիւն. եւ իսկ յետ որոյ աւուրց ինչ անցելոյ առեալ զմեզ բարեպաշտից ժողովրդոց Տարօնոյ Համայնից, տանելով զմերս նուաստութիւն յերկնատիպ, սրօրէապար, լուսաւորչակերտ ուխտն Սրբազան, ընդ հովանեաւ բարեբաշխ շիրմին՝ մեծի Մկրտչին Յիսուսի Քրիստոսի:

Եւ իբրեւ մտաք է յորն ընդ լուսանալ առաւօտուն եւ ի ծագել արեգական, եւ մեք սկսաք զՎրեթեանն արարութեան: Երեւեցաւ եւ նոյն ժամայն սքանչելագեղ եւ լուսաճաճանչ, ահեղահրաշ Տաճարն Սրբոյ Դեժ, որ հայ է հանրէդ Մարտիանն Դարդի եւ Տարօնոյն Բաշնի: ¹

1 Ս. Կարապետ եւ առհասարակ Մշոյ բոլոր վանքերը լուսաշէն կ'ըսուին կամ լուսաարշալէն. որովհետեւ Լուսաւորչի ձեռքով շինուած են ատենք: Կարողեա Եպիսկոպոս, Ս. Կարապետի Վանահայրը, շատոնց վախճանած էր Յիշատակարանիս գրութեան ատենը եւ իրեն նախ Գրիգոր (Շղթայակիր) եւ ետքը Արրահամ Վրդ. յաջորդած էին: Կարապետին մահը կ'իյնայ 1709-1713:

2 Մշոյ դաշտին այս տեղագրութիւնն ալ կը ցուցնէ որ Յորթանքը, հաւանաբար Ջիւրեթի կամ Սորտար գիւղն ըլլայ, որ Ս. Կարապետի հարաւային կողմն են: Այդ գիւղերէն դեպ ի Ս. Կարապետ՝ ճամբան կամաց կամաց կը լեռնանայ եւ կ'իջնէ ձորերու մէջ նորէն բարձրանալով, որ դարձեալ հովտային ճամբայ մ'է պուրակներու եւ թաւուտքի մէջ: Կոլտա եւ Շղթայակիր աղօթարանին ճամբայ ելած են գեղացիներու ընկերակցութեամբ եւ արեւու առաջին ճառագայթներուն հետ սկսած են Յովհանէս Մկրտչին շարականը երգել — «Արեգականն արդարութեան ծագման արուսեակ առաւօտեալ», եւ այլն: Կերեւի վաղնջական սովորութեան մը համեմատ այդ շարականը կ'երգեն Ս. Կարապետին ուխտաւորները. այնպէս որ երբ զիս ալ դիմաւորեց Ս. Կարապետի միաբանութիւնը, եւ երբ հանդէսով ներս կը մտնէինք Վանքէն՝ դպիրք «Արե-